



ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նոյեմբերի 11-ին, ուրբաթ օրը, ժամը 12-ին, Երևանի արվեստի աշխատողների տան դահլիճում տեղի է ունենում Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի հոբելյանական լիագումար հիստը՝ Հոկտեմբերյան հեղափոխության 60-ամյակի առիթով:

Հանդիսությունը ներկա էին կոմիտեի վարչության պատասխանատու անդամներ, մայրաքաղաքի հասարակականության ներկայացուցիչներ, մտավորականներ, արվեստագետներ, ռադիոյի, հեռուստատեսության և մամուլի աշխատողներ, ինչպես նաև հայրենիքում գտնվող սփյուռքահայ հասարակական-մշակութային գործիչներ:

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի տարեկան լիագումար հիստին ներկա էր նաև Հայոց Հայրապետը:

Այս առիթով Նորին Սրբությանը ողջեցում էին Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը, Աղբթեանի թեմի առաջնորդ և Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթրույանը և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուր Հատիտյանը:

Հոբելյանական լիագումար հիստը ներածական խոսքով բաց է անում բանաստեղծ Վահագն Դավթյանը:

Այնուհետև կոմիտեի հոբելյանական տարվա գործունեության մասին բովանդակալից ու շահեկան զեկուցումով հանդես է գալիս կոմիտեի նախագահ Վարդգես Համազասպյանը:

Այս զեկուցման շուրջ տեղի է ունենում մտքերի հետաքրքիր փոխանակություն, որին մասնակցում են Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ,

դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Զարյանը, լիբանանահայ հասարակական գործիչ և «Կանչ» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Հարություն Մատեյանը, Բեյրութի Թերեյան մշակութային միության նախագահ, պրոֆ. Բարունակ Թովմասյանը, լիբանանահայ հասարակական գործիչ Ավետիս Դամիրյանը, ամերիկահայ սիրված բանաստեղծուհի Ալիսիա Կիրակոսյանը, որը արտասանում է հայրենիքին նվիրված իր ոգեշունչ ու գեղեցիկ «Վերադարձ» բանաստեղծությունը, ֆրանսահայ մշակութային միության և ֆրանսահայ երիտասարդական կազմակերպության (ԺԱՅ) անունից՝ հասարակական գործիչ Ալասի Դարբինյանը, և ուրիշներ:

Այնուհետև հրավիրվում է Հայոց Հայրապետը՝ իր ողջույնի և օրհնության խոսքն անելու այս առիթով:

«Ամեն անգամ սիրով ենք պատասխանում սփյուռքահայության հրավերին, և գալիս ենք Մեր ողջույնը բերելու նրա դեկավարությանը և կոմիտեի գործունեությանը:

Այսօր դարձյալ եկել ենք այստեղ գոհուհանակ սրտով:

Բացառիկ է սակայն այսօրվա առիթը, որ համախմբել է մեզ այս սրահի կամարների ներքո: Վաթսունամյակն է Հոկտեմբերյան հեղափոխության:

Ոմանց մտքում կարող է հարց ծագել, թե այսպիսի առիթով ի՞նչ կարող է ասել Ամենայն Հայոց կաթողիկոսը: Ոմանք միտցն ենույնիսկ Նրա հանգամանքին հետ ահամատեղելի գտնեն Նրա ներկայությունը որս հանդիսությունը:

Բայց կարծում ենք ուղիղ չէր լինի այդպես մտածել:

Հոկտեմբերյան հեղափոխությունը աշ-

խարհաստան մի եղելություն է համաշխարհային պատմության մեջ, մի կարևոր իրադարձություն, որը հետաքրքրում է և՛ և՛ կենդեցուն, և՛ հոգևորականությանը:

Նույնիսկ գուտ քրիստոնեական, ավետարանական տեսանկյունից դիտված, Մենք հակված ենք խորհելու, որ եթե Հիսուս աշխարհ գար երկու հազար տարիներ ավելի ուշ, շատ հավանական է, թե Նա ընկերվարությունը ավետող կլիներ: Թե առաջին դարերից հետո, բյուզանդական կայսերապաշտության, արևմտյան ֆեոդալական և ապա՝ գաղութատիրության դարաշրջաններում Քրիստոսի անունով կազմակերպված եկեղեցիները ինչ կեցված ու գործելակերպ ուղեգրեցին պետությանը քաղաքական շահերի հովանու ներքո, դա արդեն այլ պատմություն է, որի մասին շատ խոսված է և տակավին պիտի խոսվի:

Բայց Մենք այստեղ ենք այսօր, մանավանդ ասելու համար, որ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը, եղավ մասնադրանակը տառապյալ հայ ժողովրդի երազանքների իրականացման: Երազանքները նրա արժանավոր գավակների, ինչպիսիք եղան Հակոբ Դ Զուղայեցի կաթողիկոսի, Միմաս վրդ. Տիգրանյանի, Իսրայել Օրու, Խաչատուր Աբովյանի, Միք. Նալբանդյանի, Զորավար Անդրանիկի, Ստեփան Ծառուսյանի և բոլոր հայ հեղափոխականների, որոնք զոհվեցին ազատության արյունոտ ճանապարհի վրա:

Այդ երազանքով ապրեցին ու գործեցին մասնադրանակները Ներսես Աշտարակեցի կաթողիկոսը՝ հոգևոր հայրը Խաչատուր Աբովյանի, ապա Խրիմյան Հայրիկ, Գարեգին Հովսեփյանց, Գևորգ Զ Զորեքյան կաթողիկոսները և ուրիշներ:

Մեր գիտակցության մեջ՝ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, հայ ազատագրական շարժումը, Սարգսրապա-

տի ճակատամարտը, Հոկտեմբերյան հեղափոխությունը և նոյեմբեր 29-ը պատմականորեն մեկ ներդաշնակ ամբողջություն են կազմում:

Այս ոգով է, որ Մենք Մեր ողջուն ենք բերում այստեղ:

Մենք այս առթիվ կցանկանալիք Մեր հայրական խոսքը ուղղել մասնադրանքի հայության, որի կարևոր ղեկավարներից գտնվում են այստեղ, այս դահլիճում: Մենք մաղթում ենք, որ սփյուռքի մեր հարազատ ժողովուրդը առավել ուղիղ հասկանա Մայր Հայաստանը, վերածնված մեր Հայրենիքը իր այսօրվա իրականությամբ և հետագա զարգացման հնարավորություններով:

Մեր օրերի Սովետական Հայաստանը միակ հնարավոր Հայաստանն է, և հետևաբար միակ լավագույն Հայաստանը:

Ողջուն մեր ժողովրդի վերածնունդին:

Ու Մեր օրհնությունը բոլորիդ»:

Հայոց Հայրապետի խոսքը լսվում է մեծ հետաքրքրությամբ:

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի տարեկան գործունեությանը նվիրված սույն հոբելյանական լիագումար նիստը զբաղվում է մասնադրանքային հարցերով:

Հանդիսության ավարտին ներկաները ընդունում են կոչ՝ ուղղված սփյուռքահայությանը:

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի լիագումար նիստը իր աշխատանքներն ավարտում է խանդավառ մթնոլորտում, հայրենիք-սփյուռք հայրենասիրական, մշակութային հետագա կապերի էլ ավելի սերտացման սրտագին վճռականությամբ և պայծառ հեռանկարներով՝ ի մխիթարություն սփյուռքի հայրենակարոտ հայության և ի բարօրություն հայրենյաց ու հայրենաբնակ մեր ժողովրդի:

Ա. Հ.

